[ARMENIAN TEXT – TEXTE ARMÉNIEN]

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև կրթության և մշակույթի բնագավառում համագործակցության մասին

Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

առաջնորդվելով երկու երկրների միջև կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում համագործակցություն հաստատելու և ամրապնդելու ցանկությամբ,

համոզված լինելով, որ վերը նշված համագործակցությունը արժեքավոր միջոց է երկու երկրների միջև փոխըմբռնումն ամրապնդելու համար,

գիտակցելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառների համագործակցության համար նպաստավոր մեխանիզմների հաստատման կարևորությունը և համագործակցության հատուկ ծրագրերի իրագործման և միջազգային ասպարեզի նոր զարգացման ոլորտում մշակութային և կրթական փոխանակումների անհրաժեշտությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակն է ընդլայնել և խրախուսել համագործակցությունը կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում երկու երկրների կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների միջև, գիտելիքների փոխանակմանը նպաստող միջոցառումների իրականացման միջոցով, ելնելով այն միջազգային կոնվենցիաներից, որոնց միացել են Կողմերը, և այլ միջազգային համաձայնագրերում և երկու երկրների ներպետական օրենսդրություններում ամրագրված իրավունքների և պարտավորությունների պահպանման միջոցով:

Հոդված 2

Կողմերը կձգտեն համագործակցություն հաստատել իրենց ազգային ուսումնական համակարգերի միջև փորձագետների, հրատարակումների և

նյութերի փոխանակման միջոցով՝ ապագա համատեղ համագործակցության ծրագրեր իրականացնելու համար:

Հոդված 3

Կողմերը կհամագործակցեն բարձրագույն կրթության ոլորտներում երկու երկրների համակարգերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միջոցով և կխրախուսեն իրենց համալսարանների և այլ բարձրագույն ուսումնական, մշակութային և հետազոտական հաստատությունների միջև անմիջական հարաբերությունների հաստատումն ու պահպանումը՝ գործնական համաձայնագրերի, համագործակցության ծրագրերի իրականացում, համատեղ նախագծերում մասնակցություն և փորձագետների փոխանակում ապահովելու նպատակով:

Հոդված 4

Կողմերը իրենց հնարավորությունների սահմաններում կնպաստեն ուսանողների փոխանակմանը կրթաթոշակային ծրագրերի միջոցով՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ասպիրանտական և հետազոտական դասընթացներ անցնելու նպատակով: Պայմանները, դասավանդումը և ֆինանսական հարցերը կապահովվեն գործնական համաձայնագրերի և առանձին ծրագրերի միջոցով:

Հոդված 5

Կողմերը կխրախուսեն միմյանց լեզուների, գրականության և մշակույթի ուսումնասիրումը:

Հոդված 6

Կողմերը համաձայնում են փոխադարձաբար նպաստել իրենց երկրների մայրաքաղաքներում մշակութային կենտրոնների հիմնադրմանը: Այս նպատակով Կողմերը հատուկ համաձայնագրեր կկնքեն նշված կենտրոնների իրավական կարգավիճակը և գործունեության պայմանները սահմանելու համար:

Հոդված 7

Կողմերը կնպաստեն միմյանց մշակութային գործերի ցուցադրմանը գեղարվեստական խմբերի փոխանակման և մշակութային միջոցառումներին, միջազգային փառատոներին, ներկայացումներին և երաժշտական միջոցառումներին մասնակցության միջոցով:

Հոդված 8

Կողմերը կամրապնդեն կապերը իրենց ազգային արխիվների, գրադարանների և թանգարանների միջև և կխրախուսեն իրենց մշակութային ժառանգության փոխադարձաբար տարածումն ու պահպանումը և, իրենց ներպետական օրենսդրության համաձայն, կապահովեն փաստաթղթերի և տեղեկատվության մատչելիությունը:

Հոդված 9

Կողմերը կհամագործակցեն իրենց մշակութային և պատմական ժառանգություն հանդիսացող ապրանքների անօրինական ներմուծման, արտահանման և տեղափոխման կանխման հարցերում՝ համաձայն իրենց ներպետական օրենսդրությունների և համապատասխան այն միջազգային համաձայնագրերի, որոնց մասնակից են հանդիսանում Կողմերը:

Համաձայն վերոհիշյալի՝ Կողմերը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ անօրինական ճանապարհով ներմուծված կամ արտահանված ապրանքները վերադարձնելու համար:

Հոդված 10

Կողմերը կաջակցեն գրականության արտադրությունը բարելավող միջոցառումների իրականացմանը՝ գրողների փոխանակման, ինչպես նաև գրքերի տոնավաճառներում, հանդիպումներում, թարգմանություններ կատարելու գործընթացներում և համատեղ հրատարակչական նախագծերում մասնակցության միջոցով: Կողմերը նույնպես կձգտեն ուժեղացնել կապերը իրենց հրատարակչությունների միջև՝ գրականության արտադրությանը նպաստելու նպատակով:

Հոդված 11

Կողմերը կփոխանակեն հեղինակային իրավունքի և դրան առնչվող իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն, որպեսզի ծանոթանան տվյալ բնագավառների համապատասխան համակարգի հետ:

Կողմերը պատշաճ կերպով կպաշտպանեն գրական, ցուցադրական, գիտական և մշակութային աշխատանքների հեղինակային իրավունքները և կապահովեն բոլոր անհրաժեշտ միջոցները և ընթացակարգը մտավոր սեփականության իրավունքը պաշտպանելու համար՝ համաձայն իրենց ներպետական օրենսդրության և այն միջազգային կոնվենցիաների, որոնց մասնակից են Կողմերը:

Հոդված 12

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը երկու երկրների ռադիոյի և հեռուստատեսության, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների հեռարձակման հաստատությունների միջև՝ իրենց վերջին արտադրանքների մասին միմյանց տեղեկացնելու և երկու երկրների մշակույթների մասին հաղորդումների հեռարձակմանն աջակցելու նպատակով:

Հոդված 13

Կողմերը կնպաստեն կինեմատոգրաֆիայի բնագավառում համագործակցությանը ֆիլմերի փոխանակման և կինոնկարահանողների, փորձագետների, այս բնագավառում ներգրավված տեխնիկական աշխատողների հանդիպումների կազմակերպման, ինչպես նաև երկու երկրներում անցկացվող կինոփառատոներին փոխադարձաբար մասնակցության միջոցով:

Հոդված 14

Կողմերը կխրախուսեն մշակութային արդյունաբերության մասին տեղեկատվության փոխանակումը և այս ոլորտում համատեղ ծրագրերի իրականացումը:

Հոդված 15

Կողմերը կխրախուսեն իրենց իրավասու հաստատությունների միջև համագործակցությունը՝ բնակչության ամենախոցելի խմբերին՝ կանանց, երեխաներին, հաշմանդամներին և ծերերին, մշակութային, կրթական և սպորտային աջակցություն ցուցաբերելու և հատուկ ուշադրություն դարձնելու նպատակով:

Հոդված 16

Կողմերը կխրախուսեն երկու երկրների կրթական, մշակութային, հանգստի և կազդուրիչ ծառայություններ ապահովելու համար պատասխանատու հաստատությունների միջև համագործակցությունը:

Կողմերը նաև կխրախուսեն երիտասարդության, հանգստի, ֆիզիկական կրթության և սպորտի հարցերով զբաղվող իրենց իրավասու հաստատությունների միջև համագործակցությունը:

Հոդված 17

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով Կողմերը համատեղ կմշակեն երկամյա կամ եռամյա ծրագրեր՝ ելնելով տվյալ բնագավառի իրենց երկրների առաջնային խնդիրներից և կրթական, մշակութային և սոցիալական զարգացման ռազմավարություններից:

Յուրաքանչյուր ծրագիր պետք է սահմանի նպատակները, համագործակցության ձևերը, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները, աշխատանքային ժամանակացույցը, ինչպես նաև բնագավառները: Նրանք նաև կսահմանեն յուրաքանչյուր Կողմի պարտավորությունները, ներառյալ ֆինանսական բնույթի պարտավորությունները:

Յուրաքանչյուր ծրագիր պարբերաբար կգնահատվի 19-րդ հոդվածում նշված համակարգող մարմինների պահանջով:

Հոդված 18

Ելնելով սույն Համաձայնագրի նպատակներից՝ Կողմերի միջև կրթական և մշակութային համագործակցությունը կարող է իրագործվել հետևյալ ուղղություններով՝

1. հետազոտական ծրագրերի համատեղ և համակարգված իրականացում,

2. անմիջական համագործակցության համաձայնագրերի կիրառում բոլոր մակարդակի ուսումնական հաստատությունների միջև,

3. ուսումնական դասընթացների կազմակերպում մարդկային ռեսուրսների համար,

4. կոնգրեսների, սեմինարների, գիտաժողովների և այլ ակադեմիական միջոցառումների կազմակերպում, որոնց կմասնակցեն երկու երկրների փորձագետները,

5. երկու երկրների դպրոցներում, համալսարաններում, ուսումնական և մշակութային հաստատություններում ստեղծել պրոֆեսորական և ընթերակայական անձնակազմ,

6. փորձագետների, պրոֆեսորների, հետազոտողների և դասախոսների փոխանակում,

7. Կողմերից յուրաքանչյուրի հնարավորությունների սահմաններում՝ կրթաթոշակների և կոչումների շնորհում՝ հնարավորություն տալով իրենց քաղաքացիներին շարունակելու ասպիրանտական, մասնագիտական կամ հետազոտական ուսումը իրենց բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ նախապես հաստատված ոլորտներում,

8. ասպիրանտների ուղարկում և ընդունում՝ մասնագիտական և հետազոտական ուսման նպատակով,

9. գրողների, ստեղծագործողների, դերասանների, մենակատարների և գեղարվեստական խմբերի, ինչպես նաև արվեստագետների ուղարկում և ընդունում արվեստի ուսուցման բնագավառում փորձի փոխանակման նպատակով,

10. իրենց երկրներում կազմակերպվող մշակութային միջոցառումների, միջազգային փառատոների, ինչպես նաև գրքի տոնավաճառների և գրական հանդիպումների մասնակցություն,

11. յուրաքանչյուր Կողմի մշակութային և գեղարվեստի ներկայացուցիչների ցուցահանդեսների կազմակերպում և ներկայացում մյուս Կողմի երկրում,

12. յուրաքանչյուր երկրի գրական ստեղծագործությունների թարգմանում և համատեղ հրատարակում,

13. հատուկ ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական նյութերի ապահովում, առաքում և ընդունում,

14. ուսումնական և մշակութային օգտագործման համար նախատեսված տեսաժապավեններով և ձայներիզներով, ինչպես նաև ռադիոծրագրերով և հեռուստածրագրերով ապահովում, դրանց առաքում և ընդունում,

15. յուրաքանչյուր երկրում կազմակերպվող կինոփառատոներին մասնակցելու նպատակով՝ ֆիլմերի և նմանատիպ նյութերի ապահովում, առաքում և ընդունում,

16. ուսումնական նպատակների համար նախատեսված սպորտային նյութերով ապահովում, դրանց առաքում և ընդունում,

17. կրթական, մշակութային և արվեստի բնագավառներին վերաբերող տեղեկատվական, բիբլիոգրաֆիկ և վավերագրական նյութերի ապահովում, առաքում և ընդունում,

18. երրորդ երկրներում կրթական և մշակութային համատեղ միջոցառումների իրականացում, և

19. երկու Կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ գործունեության ծավալում:

Հոդված 19

Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության միջոցառումները համակարգելու և իրականացնելու նպատակով կստեղծվի Կրթական և Մշակութային համագործակցության Խառը հանձնաժողով: Սույն Հանձնաժողովը կհամակարգվի համապատասխան գրասենյակների կողմից, կազմված կլինի երկու երկրների ներկայացուցիչներից և նիստեր կգումարի Կողմերի միջև դիվանագիտական ուղիներով համաձայնեցված ժամկետներում՝ հաջորդաբար Մեքսիկայում և Հայաստանում: Համագործակցության Խառը հանձնաժողովը կունենա հետևյալ գործառույթները՝

1. գնահատել և սահմանել այն առաջնային ոլորտները, որոնցում հնարավոր կլինի մշակել համագործակցության հատուկ ծրագրեր կրթության, արվեստի, երիտասարդության և սպորտի բնագավառներում, ինչպես նաև՝ դրանց իրականացման համար համապատասխան միջոցներ,

2. վերլուծել, վերանայել, բարելավել, վերահսկել և գնահատել կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառների համագործակցության ծրագրերը,

3. վերահսկել սույն Համաձայնագրի պատշաճ իրականացումը, ինչպես նաև համաձայնեցված նախագծերի կատարումը՝ ձեռնարկելով համապատասխան միջոցներ դրանք սահմանված ժամանակահատվածներում ավարտելու համար,

4. ձեռնարկել քայլեր՝ սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների կատարման ընթացքում առաջացած վարչական և ֆինանսական խնդիրները կարգավորելու համար, և

5. Կողմերից յուրաքանչյուրին ներկայացնել առնչվող առաջարկներ:

Չնայած սույն հոդվածի առաջին պարբերության դրույթներին՝ Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է մյուս Կողմին ներկայացնել կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի համագործակցության հատուկ նախագծեր Խառը հանձնաժողովի ուսումնասիրման և համապատասխան հավանության համար:

Հոդված 20

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են հայցել ֆինանսական աջակցություն արտաքին աղբյուրներից, այնպիսիներից, ինչպիսիք են միջազգային կազմակերպությունների և երրորդ կողմի երկրները, սույն Համաձայնագրի շրջանակներում իրականացվող ծրագրերի և նախագծերի իրականացման համար:

Հոդված 21

Կողմերից յուրաքանչյուրը կստեղծի բարենպաստ պայմաններ՝ ապահովելու համագործակցության նախագծերում ներգրավված պաշտոնական մասնակիցների մուտքը իր երկիր, կեցությունը և մեկնումը: Այս մասնակիցները ենթակա կլինեն ընդունող երկրի ներգաղթի, հարկային, մաքսային, սանիտարական և ազգային անվտանգության բնագավառում գործող օրենքներին և առանց իրավասու իշխանությունների նախնական թույլտվության չեն կարողանա մասնակցել որևէ միջոցառման, որը չի մտնի իրենց գործառույթների մեջ:

Հոդված 22

Համաձայն իրենց ներպետական օրենսդրություններին՝ Կողմերը կստեղծեն բարենպաստ վարչական, հարկային և մաքսային պայմաններ, որոնք անհրաժեշտ են նախագծերի իրականացման համար օգտագործվող սարքավորումների և նյութերի ժամանակավորապես ներմուծման և իրենց տարածքներից արտահանման համար:

Հոդված 23

Ցանկացած տարաձայնություն, որը կարող է առաջանալ սույն Համաձայնագրի կիրառման ժամանակ, Կողմերի միջև կլուծվի փոխադարձ համաձայնությամբ՝ դիվանագիտական ուղիներով:

Հոդված 24

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմտնի վերջին ծանուցման ժամկետից 30 /երեսուն/ օր անց, որը դիվանագիտական ուղիներով կտեղեկացնի սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման ավարտի մասին:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա 5 /հինգ/ տարվա ընթացքում և ինքնաբերաբար կերկարաձգվի նույն ժամկետով, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետը լրանալուց առնվազն 6 /վեց/ ամիս առաջ դիվանագիտական ուղիներով մյուս Կողմին գրավոր չհայտնի դրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ուժի մեջ կմտնեն համաձայն սույն հոդվածի առաջին պարբերությունում ամրագրված ընթացակարգի:

Սույն Համաձայնագրի դադարեցումը չի ազդի իրականացվող ծրագրերի և նախագծերի ավարտի վրա, եթե Կողմերը այլ բան չպայմանավորվեն:

Կատարված է Մեխիկո քաղաքում 2002թ. օգոստոսի քսաներկուսին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ իսպաներեն, հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր օրինակները հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Մեքսիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից՝	Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝